ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01 փետրվարի 2021թ.

Նախագահ՝ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար ՝ Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 13 անդամները, տնօրենի պաշտոնակատար պ-ն Ա.Մակարյանը, « Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի դասախոս Ռ.Յոլչյանը, և ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի առաջարկի ներկայացում և քննարկում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

2. Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

3. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացուցների հաստատում:

/զեկ. Ամբիոնների վարիչներ Ա.Ս.Հովակիմյան, Գ.Ս.Սիմոնյան/

4. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում:

/զեկ. Ամբիոնների վարիչներ Ա.Ս.Հովակիմյան, Գ.Ս.Սիմոնյան/

5. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների հաստատում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

6. Ֆակուլտետի ուս.տարվա գործունեության աշխատանքային պլանից բխող ֆակուլտետի 2-րդ կիսամյակի գործունեության աշխատանքային պլանի հաստատում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

7. Ֆակուլտետում նոր մասնագիտություն բացելու նախապատրաստական աշխատանքներ:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

Առցանաց քվեարկությամբ՝ 13 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 2/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին հարցի՝ «Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի առաջարկի ներկայացում և քննարկում», վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև .

Բնական գիտությունների գիտական խորհրդի կազմում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ: Հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 54-րդ կետը ընտրվել է ֆակուլտետի գիտական խորհրդի 11 անդամներից բաղկացած նոր կազմը՝ ֆակուլտետի աշխատակազմից, ուսանողներից և արտաքին շահառուներից: Քանի որ չորրորդ կուրսի ուսանողները ավարտում են, ապա քսանհինգ տոկոս ուսանողական կազմում ՈՒԽ-ն առաջադրել է հետևյալ ուսանողներին.

Ստեփանյան Հասմիկ-ԻԿՄ երկրորդ կուրսի ավագ,

Խաչատրյան Գառնիկ- ԵՊՀ ԻՄ ՈՒԽ փոխնախագահ ,

Խաչատրյան Արև-Բնագիտական ֆակուլտետի ՈՒԽ նախագահի տեղակալ, որպես արտաքին շահակիցներ՝

Սարոյան Կիմ -«Սիներջի ինթերնեյշնըլ սիսթըմզ» ընկերության DB ինժեներ

Թովմասյան Արտաշես- Digital Wave ընկերության տնօրեն

Առցանց բաց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/2

Ներկայացնել ԵՊՀ ԻՄ տնօրենի հաստատմանը:

Նոր կազմը ներկայացվում է

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Օրակարգի երկրորդ հարցի՝ «Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին» , վերաբերյալ Մ.Զաքարարյանի հաղորդումը հետևյալն էր.

-Երկրորդ կիսամյակը սկսվում է փետրվարի 9-ից և ավարտվում է հունիսի 5-ին: Դասախոսությունները կանզմակերպվելու է OnLine ռեժիմով, շաբաթվա մեջ երկու օրը կհատկացվի գործնական և լաբորատոր դասերին, որոնք կանցկացվեն ofLine ռեժիմով:

Դասաժամերը բաշխված են, բացառությամբ երրորդ կուրսում ֆունկցիոնալ անալիզ, օպտիմիզացիայի մեթոդ, իսկ չորրորդ կուրսում՝ օպտիմիզացիայի մեթոդներ առարկաների: Դաացուսակը ավարտուն տեսքի կբերվի առանց այդ երեք առարկաների դասախոսների անունները լրացնելու » :

Արտահայտվեցին Ա.Թովմասյանը, Մ.Ճաղարյանը: Նրանց հետաքրքրում էր այն, որ եթե առարկան կամընտրական է, ապա հնարավոր է արդյոք փոխարինել այլ առարկայով: Ա.Դավթյանը պատասխանեց.

–Դա հնարավոր չէ, մենք պարտավոր ենք ապահովել համապատասխան մասնագետներով, հարցը անպայման կստանա լուծում:

Առցանց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/3

ԸՆԴՈՒՆԵԼ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Օրակարգի երրորդ հարցի՝ « Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացուցների հաստատում», վերաբերյալ հաղորդում ունեցան *ամբիոնների վարիչներ Ա.Ս.Հովակիմյանը, Գ.Ս.Սիմոնյանը:*

Ա.Հովակիմյանի հաղորդումը հետևյալն էր.

-Ի/ԿՄ կրթական ծրագիրը պարբերաբար վերանայվում է: 17-21, 20-24 ուս.տարիների համար ներառվել է հետազոտական բաղադրիչ, վերանայվել են առարկայական ծրագրերի մասնագրերը, առարկայական ծրագրերում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ:

Աշխատանքների ցանկը հետևյալն է.

1. Կրթական ծրագրից դասախոսների և ուսանողների բավարարվածության վերլուծություն:
2. Շրջանավարտների տեղաբաշխման վերլուծություն (Կարիերայի բաժնի հետ համատեղ):
3. Շրջանավարտների և գործատուների հարցման արդյունքների վերլուծություն:
4. Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման վերլուծություն:
5. Առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՌՀ, ՄՊՀ) կրթական ծրագրերի բենչմարքինգ. Լավագույն փորձի ներդրում և կիրառում:
6. Առցանց դասավանդման, ուսումնառության, գնահատման մեխանիզմների ներառում կրթական ծրագրում: e-learning հարթակի օգտագործում:
7. 2021-2025 ուս. Տարիների համար "ԻԿՄ կրթական ծրագրի" բավանդակության վերջնականացում:

Կազմվել է "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" կրթական ծրագրի վերանայման ժամանակացույց, որը ներկայացնում եմ գիտ.խորհրդի հաստատմանը: /Տես հավելված 2/:

Գ.Սիմոնյանի հաղորդումը հետևյալն էր.

– Կրթական ծրագրերի շեղումը չպետք է գերազանցի ԵՊՀ-ի համապատասխան կրթական ծրագրերի 10%: ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերը հիմնականում համապատասխանում են ԵՊՀ-ի կրթական ծրագրերին:

Արտահայտվեց Ա.Մակարյանը: Նա ներկայացրեց.

-Առցանց դասավանդման, ուսումնառության, գնահատման մեխանիզմները կրթական ծրագրում ներառելու, e-learning հարթակ օգտագործելու համար ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից կազմակերպվել է ***<Առցանց դասավանդման հմտությունների զարգացում> դասընթաց/Moodle/,*** որը վարելու է Աննա Ալեքսանյանը: Դասընթացն իրականացվելու է առցանց՝ Zoom հարթակի միջոցով, փետրվարի 2-ին, 3-ին և 4-ին, ժամը 16.00-17.30-ին: Առաջարկում եմ, որ ցանկացողները գրանցվեն և մասնակցեն:

Առցանց բաց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/3

ՀԱՍՏԱՏԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԸ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Օրակարգի չորրորդ հարցի՝ «1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում», վերաբերյալ հաղորդում ունեցան *ամբիոնների վարիչներ Ա.Ս.Հովակիմյանը, Գ.Ս.Սիմոնյանը:*

Գ.Սիմոնյանի հաղորդումը հետևյալն էր.

- ՔԿԳ IV կուրսում հետազոտական բաղադրիչ ուներ «Հողային ռեսուրսների կառավարում» առարկան, դասախոսը Ա.Հակոբյանն է: ՔԿԳ IV կուրսի հինգ ուսանողներ զեկույցներով հանդես են եկել և ներկայացրել իրենց հետազոտած թեմաները: Աշխատանքները գնահատվել են գերազանց: Այդ աշխատանքները ներկայացվելու են կոնֆերանսի:

Ա.Հովակիմյանի հաղորդումը հետևյալն էր.

-Ուսանողներին նախապես տրամադրվել էր մեթոդական ուղեցույց: ԻԿՄ մասնագիտության երրորդ կուրսի ուսանողները հետազոտական բաղադրիչ են իրականացրել մաթ.մոդելավորում և թվային մեթոդներ առարկայից: Եղել են թերացումներ, մյուս տարի կշտկվեն: ԻԿՄ IV կուրսի ուսանողները հետազոտական բաղադրիչ են իրականացրել WEB ծրագրավորումից:

Քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտվեց Ա.Մակարյանը: Նա ասաց, որ ԻԿՄ III կուրսի 7 ուսանողներ չեն աշխատել ընդհանրապես, մյուսների մոտ ստացվել էր ինքնուրույն խնդիրների լուծում տվյալ դասընթացի շրջանակներում: Նա նշեց, որ այս տարի հեռակա բաժնում հետազոտական բաղադրիչ չեն իրականացնի, մյուս տարիներին հետազոտական աշխատանքները կներառվեն նաև ՀՈՒԲ-ում:

II կիսամյակում երեք շաբաթվա ընթացքում հետազոտական բաղադրիչները և խնդիրները պետք է ներկայացվեն ամբիոն, որակի բաժնում կամփոփեն մեթոդական ուղեցույցը և կտրամադրվեն ուսանողներին:

Առցանց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/4

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԳՆԱՀԱՏԵԼ ԲԱՎԱՐԱՐ

Օրակարգի հինգերորդ հարցի՝ «2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների հաստատում», վերաբերյալ Մ.Զաքարյանը ներկայացրեց հետևյալը.

I լուծարքային շրջանը փետրվարի 4-12

II լուծարքային շրջանը փետրվարի 18-26

Լուծարք ունեցող ուսանողների քանակը բավականին մեծ է, դա ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները, մի մասը քննություններին չեն մասնակցել վճար չմուծելու պատճառով, մյուսները եղել են անպատրաստ:
Լուծարքները անցկացվելու են հանձնաժողովներով: Հանձնաժողովների կազմը ներկայացվել է տնօրենի հաստատմանը:

Առցանց բաց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/5

ԸՆԴՈՒՆԵԼ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Օրակարգի վեցերորդ հարցի՝ «Ֆակուլտետի ուս.տարվա գործունեության աշխատանքային պլանից բխող ֆակուլտետի 2-րդ կիսամյակի գործունեության աշխատանքային պլանի հաստատում», վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև .
-Գիտ.խորհրդի օրինակելի պլանը վերանայվել և ուղարկվել է հաստատման: Նոր կարճաժամկետ ռազմավարական պլանը դեռևս հաստատված չէ:

Ա.Մակարյանի կողմից ստացվել է առաջադրանք, դուրս գրել այն խնդիրները, որոնք չեն իրականացվել կամ մասամբ են իրականացվել, նկատի ունենալ նոր կարճաժամկետ ռազմավարական պլաններում:

Նոր ռազմավարական պլաններից ելնելով ֆակուլտետը պետք է այն ներառի իր աշխատանքային պլանում:

Առցանց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/6

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԵՏԱՁԳԵԼ:

Օրակարգի յոթերորդ հարցի՝ « Ֆակուլտետում նոր մասնագիտություն բացելու նախապատրաստական աշխատանքներ», վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական

գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև .

-Աշխատանքներ են ծավալվում Ֆակուլտետում նոր մասնագիտություն բացելու ուղղությամբ: Այդ աշխատանքներում ակտիվ ներգրավված են Ռ.Յոլչյանը և Մ.Ճաղարյանը:

Արտահայտվեցին Ա.Մակարյանը, Ռ.Յոլչյանը: Ռ.Յոլչյանը ներկայացրեց, որ Մ.Ճաղարյանի հետ միասին բազմիցս քննարկել են «Մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա» մասնագիտության առարկայական ծրագիրը, կրեդիտների բաշխումը, եկել են ընդհանուր հայտարարի:

Առաջիկա խնդիրն է կամընտրական առարկաների ընտրությունը և պրակտիկանների կազմակերպման հարցը: Այն պատրաստ լինելուց հետո կներկայացվի ուսումնամեթոդական վարչություն վերանայելու:

Ա.Մակարյանը նշեց, որ ուսումնական պլանը հարկավոր է համեմատել լիցենզավորված ուսումնական պլանի հետ և հավելեց, որ Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնը պատրաստ է համագործակցելու:

Մ.Զաքարյանը հավելեց.

- Մասնագիտության համար բացվել է բնագիտության և ՀՏ լաբորատորիա, վարիչ է նշանակվել Գ.Գուլակյանը:

Առցանց բաց քվեարկությամբ՝ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2/7

ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԱՎԱՐՏԵԼ ԱՊՐԻԼԻՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՊՀ ԻՄ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ.

2020-21ՈՒՍ ՏԱՐԻ

N	ԱԱՀ	
1.	Մանվել Աշոտի Զաքարյան,	Գիտխորհրդի նախագահ
2.	Քնար Վլադիմիրի Օթարյան	Քարտուղար
3.	Հովակիմյան Աննա Սեդրակի,	Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ
4.	Սիմոնյան Գևորգ Սարգսի,	ԸՄ/Բ ամբիոնի վարիչ
5.	Գուլակյան Գեղամ Վոլոդյայի,	Ֆակուլտետի արհմիության նախագահ
6.	Ճաղարյան Մարիետա Ալբերտի	Ծ/ԻՏ ամբիոնի ասիստենտ
7.	Թովմասյան Արտաշես Բարսեղի	Digital wave ընկերության տնօրեն
8.	Սարոյան Կիմ Ֆուրմանովի	«Սիներջի ինթերնեյշնըլ սիսթըմզ» ընկերության DB ինժեներ
9.	Խաչատրյան Արև Վահեի	2-րդ կուրսի ավագ
10.	Խաչատրյան Գառնիկի Ժորայի	ՈՒԽ փոխնախագահ
11.	Ստեփանյան Հասմիկ Լևոնի	ԲԳՖ ՈՒԽ նախագահի տեղակալ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատում եմ

Դեկանի պաշտոնակատար Մ.Ա.Զաքարյան

“Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա”
կրթական ծրագրի վերանայման ժամանակացույց

	Աշխատանքի բովանդակություն	Պատասխանատու անձ/ աշխատանքային խումբ	Ժամկետ	Կատարողականի ցուցիչներ
1.	Հարցման թերթիկի մշակում Google Form ձևաչափով	Հովակիմյան Ա. Ճաղարյան Մ. Ստեփանյան Հ.	10.02.21-15.02.21	Հարցաթերթիկ Google Form-ի ձևաչափով
2.	Կրթական ծրագրից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպում	Հովակիմյան Ա. Ստեփանյան Հ.	15.02.21-15.03.21	Լրացված Google Form-եր
3.	Կրթական ծրագրից դասախոսների բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	15.02.21-15.03.21	Լրացված Google Form-եր
4.	Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման վերլուծություն	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	01.03.21-01.04.21	Հաշվետվություն
5.	Հարցման արդյունքների վերլուծություն	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Ճաղարյան Մ. Յոլչյան Ռ. Ստեփանյան Հ.	15.03.21-01.04.21	SWOT վերլուծության արդյունքներ (ըստ ամբիոնական առարկաների)
6.	SWOT վերլուծության արդյունքների քննարկում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Յոլչյան Ռ.	01.04.21-15.04.21	Եզրակացություններ

		Սարոյան Կ. Ճաղարյան Մ.		
7.	Առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՌՀ, ՄՊՀ) կրթական ծրագրերի բենչմարքինգ:	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.03.21- 01.04.21	Հաշվետվություն
8.	Առաջարկությունների քննարկում և փոփոխությունների ծրագրի մշակում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Յոլչյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	15.04.21- 01.05.21	Փոփոխությունների ծրագիր
9.	Կրթական ծրագրի վերջնարդյունքների վերանայում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Յոլչյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.05.21- 01.06.21	Կրթական ծրագրի վերջնարդյունքներ
10.	Առարկայական մասնագրերի վերանայում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	01.06.21- 15.06.21	Ճշտված մասնագրեր
11.	Կրթական ծրագրում փոփոխությունների իրականացում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	15.06.21- 05.07.21	Վերանայված կրթական ծրագիր
12.	2021-2025 ուս. տարիների ՝ԻԿՄ կրթական ծրագրի՞ վերջնականացում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Ճաղարյան Մ.	15.06.21- 05.07.21	2021-2025 ուս. տարիների ՝ԻԿՄ կրթական ծրագիր՞ նկարագրություն